# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

## 13 սեպտեմբերի 2013 թ. կնքված N ԲԸԱՇՁԲ-13/11 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 19.07.2017 թ.

ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԲԱՁԱԼՏ-ԷՄ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1162-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<ԲԱՁԱԼՏ-ԷՄ>> ՍՊԸ-ի միջև 13.09.2013թ կնքած՝ աշխատանքների կատարման N ԲԸԱՇՁԲ-13/11 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 5.1.1 և 8.4 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

**1.1 Կողմերը որոշեցին.**

1.1.1 13.09.2013թ կնքած՝ N ԲԸԱՇՁԲ-13/11 պետական գնման պայմանագրի 28.03.2017 թ. կնքված N7 և 30.05.2017 թ. կնքված N9 Համաձայնագրերով սահմանված համաձայնագրային գումարներից 80000000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամը, համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրային գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.2 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| **ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե** | **<<ԲԱՁԱԼՏ-ԷՄ >> ՍՊԸ** |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Արցախի 8, |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ |
| ՀՀ 900011012714, | Հ/Հ 11500632126500 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 09811321 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ______ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ | ______ Գ. Հովակիմյան (ստորագրություն) Կ.Տ |